

## Ուսուցողական այց Ստոկհոլմի տեխնոլոգիայի թագավորական ինստիտուտ

Հունիսի 7-9-ը Erasmus+ BOOST ծրագրի շրջանակներում Ստոկհոլմի տեխնոլոգիայի թագավորական ինստիտուտում տեղի ունեցավ ուսումնաճանաչողական առաջին այցը:

Այցին մասնակցում էին 23 մասնակից, այդ թվում՝ Շվեդիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Էստոնիայի և Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններից, ՀՀ կրթության և գիտության նախարարությունից, ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից:

Նպատակն էր ուսումնասիրել ծրագրի եվրոպացի գործընկերների կողմից ներկայացված միջազգայնացման փորձը և ռազմավարությունը, ինչպես նաև քննարկել և մշակել ծրագրի հետագա գործողությունները:

Եռօրյա հանդիպման ընթացքում ծրագրի հայաստանյան մասնակիցները ծանոթացան և ուսումնասիրեցին ինչպես ծրագրի եվրոպացի գործընկերների, այնպես էլ Շվեդիայի և այլ համալսարաններից հրավիրված պրոֆեսորների ներկայացրած բարձրագույն ուսումնական հաստատությունների միջազգային բաժինների կառուցվածքը, միջազգային առկա ծրագրերը, շարժունության ծրագրերի իրականացման և միջազգայնացման ընթացակարգը, միջազգայնացման ռազմավարության մշակման գործընթացը:

Ծրագրի հայաստանյան գործընկերների կողմից ներկայացվեց ծրագրի նորաստեղծ կայքի կառուցվածքը, բովանդակությունը, ինչպես նաև Erasmus+ HARMONY ծրագրի մասնակիցների կողմից ՀՀ բուհերի միջազգայնացման ուսումնասիրման նպատակով մշակված գործիքակազմն ու իրականացրած հետազոտության արդյունքները:

[Agenda](#)

[Minutes](#)



